



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

W 3

U. S. Army

1856

634
350

3442

8891.99
7-39



Անդնամարդ

(Կոմէր Ման. Թակուրեանին)

Жива согласно съ строгою моралью,
Я никому не сдѣлалъ въ мірѣ зла.

Некрасовъ.



ՀԱՅՈՎԱՆԻ ԱՐԺԱՎՈՐ ՀՅ Ա. Ա. Վ. Դ. Ա. Վ. Դ. Ա. Վ. Դ.

ՀԱՅՈՎԱՆԻ ԱՐԺԱՎՈՐ ՀՅ Ա. Ա. Վ. Դ. Ա. Վ. Դ. Ա. Վ. Դ.

Ա և Ե առաջ գու սկզբանի աշխարհ Ա և Բ
Ա և Ե առաջ գու սկզբանի աշխարհ Ա և Բ
Ա և Ե առաջ գու սկզբանի աշխարհ Ա և Բ

ՀԱՅՈՎԱՆԻ ԱՐԺԱՎՈՐ ՀՅ Ա. Ա. Վ. Դ. Ա. Վ. Դ. Ա. Վ. Դ.
ՀԱՅՈՎԱՆԻ ԱՐԺԱՎՈՐ ՀՅ Ա. Ա. Վ. Դ. Ա. Վ. Դ. Ա. Վ. Դ.

1886

350-2803



10/10
41.0/20

Հետեւելով միշտ օրինաց աշխարի՝
Ես կեանքումը մարդու վընաս չի արի .
Արժանացայ մեծ մեծ պատույ ու փառաց ,
Որ մի միայն նըպատակն էր իմ կենաց .
Տոնըս առաստ աղգի աղգի ուստեսով¹ ,
Աընդուկներըս լի թանկագին ըդգեստով .
Ծառաներըս մունջ, միշտ հըլու² հրամանիս ,
Անպակաս էր ոսկի արծաթ գրպանիս :

Իսյց ով տեսաւ երկրիս վերայ անփուշ վարդ ,
Այսպէս յաւէտ³ փառքով լցեալ չի կայ մարդ .
Այս', հասան ինձ-էլ օրեր դառնազին ,
Իսյց ՚ի զուր , զի յանցաւոր չէ՛ր իմ հոգին .
Ես մնացի Տիրոջ կամաց հընազանդ ,
Աղօթելով տիւ եւ գիշեր ջերմեռանդ .

¹ Կերակուր, кущанье. ² Հնազանդ, послушный. ³ Միշտ, всегда.

Հետեւելով միշտ օրինաց աշխարի՝
Ես կեանկումը մարդու վրնաս չի արի։

Մի օր ծառաս կոտրեց իմ մեծ հսյելին,
Որ կ'աժենար քիչքիչ հաղար ֆիօրին¹։

Ես չասացի նորա խօսքեր անվայել,
Այլ ստիպեցի վեց ամ ձրբի ծառայել.

Այս գիտուածը նորա խըրաս կը լինէր,
Օհէ օր մինչեւ եօթներորդը նա տաղէր։

Հետեւելով միշտ օրինաց աշխարի՝
Ես կեանկումը մարդու վրնաս չի արի։

Մի օր եկաւ իմ մօտ մի խեղչ պատանի,
Խնդրեց, որ ես դընեմ նորա մի բանի,
Խխաս չափաւոր եր թըշտատի խընդրածը,
Բայց էն տարի շատ թանկագին էր հացը.
Չընդունեցի նա-էլ գընաց ջուրն ընկաւ։

Ափսո՞ս արզայ, որ նա էդակէս շուտ մեռաւ։

Հետեւելով միշտ օրինաց աշխարի՝
Ես կեանկումը մարդու վրնաս չի արի։

Մի օր տեսայ մի ալեւոր մուրացկան,
Որ վեց տարի առաջ այդումն էր վարձկան²։

Խօշը էշը³ արի հետը, սիրով խօնեցի,
Վրանից սավայ՝ վո՞նց էքէֆը պատացի։

Բայց նա յանկարծ ինձնից խընդրեց մի մանեժ,
Ես զարմացայ սաստիկ, ու շուտ դարձայ յիսու։

Հետեւելով միշտ օրինաց աշխարի՝
Ես կեանկումը մարդու վրնաս չի արի։

Մի օր որդիս իրա կամքով անհրաման
Ալնտուկիցը հինգ մէկ վեց թուման⁴։

Ես իմացայ, վըրայ-հասայ, բըռնեցի,

¹ Флоринъ, гульденъ. ² բանուոր поденъщикъ. ³ բարով տալ եւ առնել զգո-
роваться. ⁴ 10 մանէժ, 10 պէլկօվախъ.

Զեռքը կապած դատաւորին մատնեցի.
Հատ չի անցաւ՝ վախից խեղչը թոյն¹ կերաւ։

Աչա, էսպէս միակ յոյսը իմ կորաւ։

Հետեւելով միշտ օրինաց աշխարի՝
Ես կեանկումը մարդու վրնաս չի արի։

Իմ Հուշանի սիրով կըպաւ Օհանին,
Եշ Օհանի ծընօդը չունքի² խեղչ էին։

Ես Հուշանիս տըլի հարուստ քօռ Գօդուն,
Որ համբանկով չգիտէր չափը իր ոսկուն։

Բայց քամբաղդ էր ծընած օրից խեղչ Հուշան,
Վեց ամիսից մըտսու թաց սառ գերեզման։

Հետեւելով միշտ օրինաց աշխարի՝
Ես կեանկումը մարդու վրնաս չի արի։

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐ

Ով ուշագրութիւնով նայել է կենդանիների վերայ, երբ-որ նոքա իրանց
ձագերի հետ միասին են լինում, ովնկատել է այն ուրախութիւնը,
որ փայլում է նոցա աչքի մէջ այդ ժամանակ։ Ով, ով, տեսել է
մարդին³, երբ-որ նա կրկտելով կանչում է իրա վառեակները։ Կա
բերկում է տեսնելով ինչպէս ձագերը հստակում են փշտանքի կամ
ցորենի հատերը, որ ինքը, թէ՛եւ քաղցած լինայել է ուտել։ Տեսել էք,
երբ-որ մանրիկ վառեակները թառում են իրանց մօր մէջքին կամ հա-
ւարվում են նորա թեւերու տակ։ Ով-որ սյս սմէնը ուշագրութեամբ
տեսել է մայրական սիրոյ վրայ ունի փոքր ինչ գաղափար։

Տեսել էք երբ-որ կատուն կատուիկների հետ խաղ է անում, ինչ
սէր, ինչ ուրախութիւն է այդ նորա համար. ինչպէս համբերութիւնով
տանում է նոցանից ստացած չարչանկը. նորա անխլնայ կըծոտում են
իրանց ասեղի պէս սուր ատամներով, փետփլտում են նորան, բայց նա

¹ զէհիր, յախ. ² որովհետեւ, ուսիւնական կամ կարգավոր առաջնական գործություն։ ³ հաւ, կորիցա.

նաեւ վախենում է անդգուշութեամբ ոսը շարժել որ ցաւ չի պատճառէ նոցա : Ուէ վրասանգ՝¹ է տեսնում՝ իսկոյն զգուշութեամբ առնում է նոցա իր մերանը եւ տանում է ասպահով՝² տեղ :

Տեսի՞ւ էք թուզոնի բուն շինելը։ Ամեն օր, ամեն ժամ անձանձիր՝
աշխատում է։ ո՛չ մի բոպէ գաղաք չ'ունի։ Վրբ-որ բունը պատրաստում
է թուզում է փափուկ փետուրներ հստափելու, որ թէ չի գտնէ՝ ուրա-
խութեամբ իրանից կը փետէ, քանիթէ կը յօժարի կոշտ տեղ դիմել իր թոյլ
ձագերը։

Ուշաբը ամեն կենդանիից վախկուսն ու հեղն է, առևն բան նորա սարսափեցնում է, բայց եթէ գառը հետան Է կատաղի՝ շունից-էլ չ' վախենալ եւ պատրսատ է քաջութեամբ պատերազմել նորա հետ։ Ոէտ տեսնէ որ գայլը մօտենում է գառնուկին՝ շուտով իրան կըսայ պատառ-պատառ անել, քանի՛ նորա։

Ուրուսունը մինչեւ 'ի մահ կը պատերազմի օձի հետ, մրջիւնը՝ որ
դի հետ, մեղմուն-էլ նոցա հետ, որոնք կը համարձակին ձագերուն
վրնասել։ Ամեն դաշան շատ կամ քիչ կատաղի, վսյրենի, արիւնար-
բու է. բայց նոցա մեջ ամենից չարերը՝ վագրը⁴, քաւթարինէն⁵, առիւ-
ծը, արջը՝ սիրում են իրանց կրիւններուն⁶։ Վրբոր օձը տեսնում է
թշնամիի մօտենալը՝ ձագին առնում է գիրկը եւ սարսափելի բերանը
բացած՝ պաշտպանում է նորա։ Այս մայրական սէո է։

Վթէ գաղանները եւ սողունները⁷ սիրում եւ պաշտպանում են
իրանց կորիմներուն կամ ձագերուն, եթէ նոքա հոգս-քաշում են եւ
կեանքերը անգամ զոհում են նոցա համար, ո՞ւքան մեծ պիտի լինի
մարդու մէջ մայրական սէրը. ՚ի հարկ է որ անպատմելի մեծ՝ պատ-
ճառ-որ՝ մայրը ունի բանականութիւն⁸, հասկացողութիւն, որից զորքի են
կենդանիները. նա գիտէ, որ իրա զաւակը պիտի աճի, ծաղկի. Մայ-
րական սէրից մեծ բան չի կայ երկրիս վերայ: Աշխարհիս երեսին
ամեն բան փոխվում է, ամեն բան կորչում եւ մոռացվում է, ամեն
սէր սառում է. բայց մայրական սէրը յախտեան մընում է անփոփոխ:
Այս սէրը նըման է այն անթառամ սէրին, որ Աստուած ունի իւր
ստեղծած արարածների վերայ:

Երբ դիպուածը բաժանում է մեղ մօլից (վա՛յ մեղ այն օրին) և

¹ փոքրանք, опасность. ² անվալս, аնկашаика, безопасный. ³ անդառար, неутомимый. ⁴ тигръ. ⁵ гиenna. ⁶ բալշ, լակոտ, щекокъ. ⁷ սողացող կենդանի, пресмыкающаяся. ⁸ լսելք, միտք, разумъ.

մեր վերայ չեն փայլում գրթառատ աշեր, մեղ համար փակվում է առնեն կարեկից սիրտ. այն ժամանակ զգում ենք մեր առանձնութիւնը. ո՛չ հարըստութիւն, ո՛չ մի աշխարի փառք կարող չէ վարձադրել մեր այդ կարուստը :

Պեր մայրը կարող է պառաւել (որովհետեւ այդ բընութեան օրէնք է), բայց նորա սէրը միշտ թարմ՝ կը մընայ . նորա սիրտը կը կորցնէ զգացմանց կենդանութիւնը, նորա երեսը կը դըկուի գեղեցկութիւնից . բայց նորա սէրը մեղ համար միշտ թարմ՝ եւ ջերմ կըմնայ : Վիտք բեր ուրեմն, երբ-որ նորա թառամած կը տեսնես, ի՞նչքան նեղութիւններ, ի՞նչքան վիշտեր, ի՞նչքան ցաւեր կըրել է նա քեզ համար . միտք-բեր նորա քու վերայ տնեցած հոգսը, երկիւղը, եւ չի կարծեմ, որ դու այնուշետեւ համարձակիս ժամանակից առաջ նորա մազերի սպիտականալու եւ նորա գերեզման մտնելու պատճառ . լինել :

Убранство

Արեւելք՝ օդնութիւն հասէ՞ք,
Անձար գլխիս ձար տեսէ՞ք.
Սրտումն է սիրոց բոցը,
Հատ խոր է նորա խոցը.
Հանգ ցընելու հնար չե կայ,
Լաւցընելու ձար չե կայ:
Բաղչից վարդ քաղել ուղեցի
Փըշով ձեռլաւ ծակեցի.
Անցոյս սիրով վառուած եմ,
Բընաւորից դաղուած եմ.
Աշխար աչքիս սեւցել է,
Հոգիս մշջը դեւցել է.
Ժամ՝ պատարագ, սրբութիւն
Խնձի է չեն փրկութիւն . . .

Աշխարհումըս մի կին-էլ
Եարիս թայը չի ծընել.
Ու Ասրա, ու Համիրամ
Կվել են Օ անանիս նըման.
Երկն բօյը չին արի,
Նկըր տամերվեց տարի.
Կ, ա և զուն աշքը ջէյ բանի?
Քեզ պաշողին երանի՞։
Ու Յուդիթ եւ ու Եսթեր
Ունեցել են քու թուխ ունքեր,
Ակրամն, նազելի Օ անան,
Աշխարհումըս աննըման։
Ու թադաւոր քու սէրէն
Վէր չի դալ իւր աթոռէն,

¹ *Лашма*, свѣжій. ² *Лѣт*, газель.

Ճնկովը չի վաժաթուիլ,
Քու սէրը չի սպազատիլ.
Աշխարումը չէ բաղդը
Կըսել արքայի թախտը.

Չեմ ուղում ես գաճ ու թաղ,
Տու լու սմակալոյս մենակ.
Ոտնախողիդ ես զուռապան,
Անդին գոհար իմ օանան.

Հաֆնէրի ճանապարհորդութեան ժամանակ պատահած անցր:

Վրբոր ես միտքը դրել իի (ասում է սլր. Հափնէր) Ահաւապանակից դուրս-դաշ յանկարծ լսեցի, որ Աէլոր անսոնով մերձակայ գեղումը մի մատաղահաս այրի Հնդկաց սովորութիւնով իր մարդու մարմինի հետ պիտի այրուի: Հետուքը լրութիւնս՝ շարժեց տեսնելու այս դիպուածը, որ ինձ համար միանդամայն նոր էր, եւ ոսով լնացի ժամուկչուայ ճանապար: Վրբոր հասայ նշանակած տեղը՝ աշադին բազմութեան մէջ տեսայ այրին, որ չորս կողմը հաւորած իր սիրելի բարեկամները՝ նստել էր մի ամսդիովանիի² տակ: Քանի հինգ տարեկան հաղիւ կրինէր նա, դէմքով-էլ խիստ սիրուն էր: Տեսնելով նորա դառը վիճակը՝ շատ ցաւեցայ վրան. բայց ինքը այրին ամենեւին վախ չէր ցոյց տալի այս սարսափելի չարչաբանիքի համար:

Փոքր ինչ սպասելից յետ գնացի այնտեղ, ուրոր նորա համար սպատաստած էր դժոխային գերեզմանը: Դաշտի մէջ տեսայ մի լսյն եւ ընդարձակ փոս բերնէ-բերան³ լցրած ածուխով, ուր անդադար սուելաց նում: Փոքր պատեցին կտաւէ որմով⁴, այն ժամանակ սնապաշտութեան⁵ խեց զոհը մօտեցաւ իրա խարոյին⁶:

Այրին հագին ուներ ակն ու մարդարիմներով պարտարած շորեր, ձեռին բռնած լիմնն եւ մեխակի արմատներ՝ անդադար հոտ էր անում: Դեռ ես

¹ Հետուքը լրութիւն, բան իմանալու կամ սովորելու ցանկութիւն, լօօնութեան: ² ամսդիովանի, բաճախուն: ³ բերնէ-բերան, լի, ուղիղ դու վերածութեան: ⁴ որմ, պատ, զարդարան: ⁵ սնապաշտութիւն, ցւեքիրութեան: ⁶ խարոյի, կուտարան:

* որմ, պատ, զարդարան: ⁵ սնապաշտութիւն, ցւեքիրութեան: ⁶ խարոյի, կուտարան:

փոսին չի հասած հանեց վրայի թանկապին շորերը, բաղշոտեց մերձաւոր ազգականներին, եւ բարեկամ աղջիկներին չորս կողմը առած գնաց մօտաւոր աղբիւրը եւ լուսցուեցաւ. յետոյ հագաւ հասարամ սպիտակ շոր եւ մօտեցաւ մարդինին, որ նաշին¹ մէջ գրած կեցած էր փոսի ափը:

Քանի մի բոսէ մտիկ-արաւ այրին հանգուցեալի վերաց, ձեռերը խմեց կուրծքին² եւ լսց-իլաւ. յետոյ երկրպատութիւն արաւ, եւ էք անգամ մանեկաւ փոսի չորս պատուար եւ մեռելի մօտից անցնելին՝ միշտ գլուխ էր տալի: Վերջի անգամ-որ կանգնեցաւ մեռելի մօտ, մոխիկ-արաւ աղդականների վերաց, տուեց նոցա իրա վերջի մնաս-բարեւը, մի բրահմանի³ ձեռից առաւ եղով կուժը⁴, եղը թափեց իրա մարդու վերաց, կուժը զրեց զլինին, բարձր ձայնով կամչեց նարայնա (Աստուած իմ) եւ թուաւ փոսի մէջ: Կորա քամակից գլուրեցին կտաւէ որմը եւ մեռած մարմինը. բոսէ շանցած փոսը ծածկուեցաւ հավարաւոր վառած կերոններով⁵: Ումբուկները⁶, դափերը եւ փողերը⁷ առել սկնեցին հնչեցնել. կնանիք սարսափելի ձիչ⁸ բարձրացուցին (շգիտեմ⁹ ուրախութեան էր, թէ տախութեան) եւ բոցը¹⁰ աշադին սկսնի պէս կանգնեցաւ փոսի վերաց, թէ եւ ես հաւաստի⁹ էի, որ թշուառական այրին բոսէ չէր անցնիլ, որ ծաւսի մէջ կ'խեղպատէր, բայց սիրոս կտօր-կտօր իլաւ տեսնելով նորա անքնական եւ սրսկալի մահը:

Վրբ կ'լինի, ասացի մլաքումըս, որ այս կռապաշտութեան խաւարի մէջ մնլրած արգը մի օր տեսնէ Աւետարանի պայծառ լսյուը գարշի իւր մոլար կրօնքի աղտեղի ծէսներից, որ խեղճ մարդկութիւնը ո՛չ թէ հաւասարէ է գաղաններին, այլ եւ տաննապատիկ առաւել ցածրերէ է նուցանից, ստիպելով նորա երկրպատութիւն տալ եւ զսէ մասուցանել շունին, օձին, կոկորդիլուին: Բայց ե՞րբ կ'լինի այդ Վրբոր մանի նոցա մէջ լուսաւորութիւն, կրժութիւն, ուսումն:

¹ նաշ, ուսումն. ² կուրծք, դօշ, ցրծք. ³ բրահման, հեթանուսների քահանաց, բրանից. ⁴ կուժ, վարչ, կավանի. ⁵ կերպն, մեծ որմ, փառք. ⁶ մոխիկ,

⁷ թմբուկ, տափուլ, օրաբաց. ⁸ փող, փունիա, դրեա. ⁹ ձիչ, սուրձայն, վիզր, կրկէ. ¹⁰ բոց, կրակի ալէֆ, ոլամա.

ՀԱՅԻՔ

Եւ

Սարուկ Մակաօի պատմութիւնը

Հանք ասվում են այն ստորերկրեայ տեղերը, ուր կազմվում են հրահալելիք, հանքային նիւթեր եւ թանկագին ակեր: Ըստիր հանքերը նոքա են, որոց մէջ գրանըլում են ոսկի, արծաթ եւ անդամանդներ. այսպիսի հանքեր շատ կան Ամերիկայումը եւ Ասիայումը: 1835 թուին միայն Եբսիկայի հանքերից ստացվեցաւ 29,500,000 մանէթի ոսկի եւ արծաթ: Բռագիլիայումը մի երկիր կայ Ասուո-դօ-ֆոխ, ուր թանկագին քարերը այնքան առատ են, որ այդ պատճառաւ նորա անունը Անդամանդի-Գատառ է ասվում: Երկար ժամանակ ուկեխընդիրութիւրը ուշադրութիւն չ'էին դարձնում այդ փայլուն քարերու վերայ եւ համարում էին նոյս հասարակ բիւրեղ: Պատահմանը այդ սուս բիւրեղներից մինը ընկնում է Հոլլանդացւոց գետանի ձեռք, երբ-որ նա Լիսսարտնում էր: Դեռապանը զարմանալով այդ քարի ցոլքի վերայ կամկածանիք մէջ է ընկնում եւ ոյց է տալի ակնավաճաներին, որովք միարերան ասում են, որ այդ ընտիր անդամանդ է: Անուշետեւ սկսեցին ուշի ուշով Ասուո-դօ-ֆոխոն ղննել ուրախուաց այժմ ամեն տարի ուղարկում են Ոիխ-Շանէյոօի գանձարանը 100,000 գուն զանազան մեծութեան անդամանդներ, բայ ՚ի նոցանից, որ նոյնքան-էլ Խարդախութեամբ ընկնում է խարերաներու ձեռք:

Անդամանդը այս կերպ են ժողովում: անդամանդախառն աւազը ածում են մեծ փայտէ տաշաերու մէջ. նոցա մէջ խողովակներով բաց են թողնում ջուր, որ թէթեւ աւազը տանում է հետը եւ ծանր անդամանդը մնում է յատակը: Խարաբանչիւր տաշտի մէջ կայ մի մեռ Սարուկ, որի պարտաւորութիւնն է ժողովէլ անդամանդների հատերը: Գտնողը պարտական է ձեռքը վեր բարձրացնել, որպէս զի կարողանաց ամենին խմաց-տալ: Կա ով-որ կ'գտնէ 17 քառաթ ծանրութեամբ ակն՝ խկոյն աղաստութիւն կըստանայ: Այս մասին կ'պատմենք մի հետաքրքիր մանրավեպ (առցօտ), որ ցոյց-կըսաց մեռ ստրուկների թշուառ վեհակը եւ նոցա ստրոնների բարբարսութիւնը:

Պակաօ անունով մի մեռ ստրուկ դանում է մի թանկագին անդամանդ. բայց մեծ գին չի դնելով այն աղաստութեանը, որ նորա

աղաստան ո՛չ մի բանով չ'էր ապահովացնում բաց ՚ի աղատ կեանքից՝ լու համարում է շարունակել իւր աշխատութիւնը, մենչեւ որ իրա համար բաւականին հարասութիւն ձեռք-բերէ. այդ նապատակով միտքը դիմում է թագինել մեծագին գոհարը: Բանը այն է հիմի ո՛ւր տեղ թագինէ, որ վերակացուները չի կարողանան վրայ-համենէլ եւ մատնել նորա: Ահա՝ ինչ խորամանկութիւն բանեցրուց ստրուկը: «Երա խրճիթի մօտ կար մի բարձր կաղնի ծառ, ուր տօժ օրերը նորա հրաման էր բարձրաւնալ եւ ճուղերի մէջ զովանալ այս դիսկուածը պատեհ համարելով՝ հնարագէտ ստրուկը ամեն անդամ ոսկի մատերի մէջ մի մի կտոր անդամանդ առած (պատճառ-որ՝ միանդամայն մերկ գոլով՝ թագինելու համար ուրիշ տեղ չ'ունէր) գնում էր այն տեղ: Երբ-որ տեսնում էր, որ ոչ ոք ուշադրութիւն չի դարձում նորա վերայ՝ հանում էր մատի մէջից քարը, գանակով փարում էր ճուղը եւ զգուշութեամբ թագինում էր նորա մէջ: Երբ-որ նա այս կերպով երկար մէջոց աշխատեցաւ եւ բաւականին բան հաւաքեց՝ այնուհետեւ կամեցաւ իր մասդրութիւնը կատարել: Առա մեծ անդամանդը եւ ձեւացրուց՝ իր թէն նոր է գտել: Ինչ խօսք երկարացները վառապով պատուալ տանում են նորա կառավարչի առաջ, որ միւս օր աղաստութիւն շնորհում է նորա:

Հիմի մնում է ինչպէս ձեռք-բերել այն ճուղը եւ մի եւ նոյն ժամանակ ոչքի կամկածանիք մէջ չի ձգել. նենդ ստրուկը այդ տեղ-էլ խութ բանեցրուց. գնաց մեծաւորի մօտ, ցոյց-տուեց նորան իր ուռած խոյսած ուսերը եւ ասաց, որ այդ կերպով անտանելի զըժուար է նորա ճանապարհորդել: Ահծահոգի պարտները ընծայեցին նորա մի ջորի: «Կա դրանով չի բաւականացաւ: Ասայ՝ որովհետեւ շատ անդամ ստիպուած պիտի լինիմ ջորիից ցած-ի ջնէլ եւ ոտով առաջ-երթալ, այդ պատճառաւ խնդրում եմ, որ թոյլ-տաք ինձ մի ցուալ առնել ձեռս: Ես ուսալիս են իրաւոնք ձեռին ցուալ առնել: Եւ ստրուկի ցանկացածն-էլ այդ էր. Խակոյն հեծնում է ծառի վերայ եւ կորում է արտէն մեղայտնի ճուղը: Յանկացած եւ թանկագին ցուալ ձեռին, գլուխը երեւակայութիւնով բորբոքած առաջ է զնում սեւը գէս ՚ի Ոիխ: Հիմի նա էլ այն քան հարուստ է, որպան-որ նորա պարտները, որտնք մի ժամանակ նորա հետ ինչպէս անաստնի հետ վարվում էին. անձնահաճութիւնը փայլում է աչքերի մէջ, նա ստրուկ չէ, այլ ինքը իրա գլխին պարու:

Այս խորհպածութեանց մէջ խորացած անցաւ երկայն եւ դժուարանց ճանապարներ եւ վերջապէս հասաւ Ոիխի պարսպի մօտ. բայց նորա երեւակայութիւնը արտէն Խարապայումն էր մոլորդում, ուր-որ

մտադիր էր առանց վտանգի իւր մեծագին ակերը ոսկիի Շետ վոխել։
Անհամբերոթիւնից ցած-ինջաւ ջորիից եւ վաղեց առաջ. մեն-էլ յան-
կարծ լսեց մի աշարկու եւ կոպիտ ձայն «Շեռացի՛ր»։ Այս ձայն համոզն էր
մի ճրագիլխացի մեծատունի ծառայ, որ տեղուաց սովորութեամբ իստա-
կում էր ճանապարը իր տիրոջ համար, թէ՛ եւ բաց ՚ի նոցանից դեռ եւս
երեքի համար-էլ տեղ կար անցնելու։ Զայնը նորից լուսեցաւ «չ՛ս լուսմ
քեզ ինչ են ասում, թշուառական։ Էս բոպէխս ինջի՛ր փոսի մէջ»։

«Այդ ի՞նչ առելորդ պահանջմունք է, ասաց ցած ձայնով Պակաօն։
մի՛թէ այդքան տեղը բառական չ՛ե ձեզ եւ ինձ համար : — » Բայց նորա
խօսքը բանի տեղ չ'էին դնում. «ցա՛ծ թոփի, ցա՛ծ ինջիր», հրամացում էին
անդադար : — «Պարօններ, ասաց Պակաօն, փոսը մեծ եւ խոր է. թէ թուչում
մէջը՝ կամ վիզը կը խախտեմ կամ ոտա կ'ջարդեմ : — » Ուրեմն դու չ՛ս
ուզում իմ խօսքը լսել, ասաց պարոնը, ու իր մորակով սկսեց անողորմ
կերպով ծեծել խեղճ սեւի երեսը : Վատաղեցաւ սեւը բարկութիւնից,
ամեն զօրութիւնը ժողովից եւ մի այնպիսի աստակ ծերից պարոնի եղեսին,
որի առաւորութիւնը հաղիւ թէ երբէք կ'կորչէր, խակրի կոտցաւ ցուպի
վերաց եւ ուզում էր փոսի միւս կողմը թշւէլ . բայց առա՛զ, ծակծկած
ցուպը նորա ծանրութեան տակ կտոր-կտոր եղաւ, սեւը գլուխեցաւ գե-
տին, եւ անդամանդները ցրիւ-լնկան նորա չորս կողմը : Երկու օրից յե-
տոյ սեւ Պակաօն կտըտամաչ մեռաւ բանդումը ինչպէս դող եւ մար-
դասպան :

ԵՐԿՐԻ ԲԱԺԱՆԱԿԻՄԸ

(Եռեր եղբայրական Պատիայէլ Պատկանեանին)։

— «Առէք աշխար, ասաց Օ եւսը երկրնքից
Պարզկան աղգին, այս բոլորը ձեզ առէք .
Չեզ եմ տալի, ինչոր գլուխէք դուք միջին,
Վիմիանց շետ եղբայրակար բաժնեցէ՛ք : —

Այս հրամանին վըբաղելով ունկընդիւ
Ծեր ու մանուկ ըսկըսեցին առարը,

Կրկրագործը առաւ դաշտը իւր բաժին
Ու որսորդը լի էրէով անտառը :

Կահասէրը ամբարանոցներ լցրեց,
Գինեմնը անուշ գինուոյ տէր եղաւ,
Սնձատունը փողոց ու կամուրջ շինեց,
Անցնող-դարձող մարդոց հարկատու արաւ :

Երբ-որ աշխար համատարած բաժնեցաւ
Եկաւ պովէտ անչափ հետու տեղէրէն,
Ափառ'ս, արդէն ամենայն ինչ տուած էր,
Եւ տէր ունէր իրեն առարկայ ամէն :

«Տէ՛ր, մի՛թէ քու այսքան առաստ պարկեւից
Քու հարազատ որդին չ'ունի իւր բաժին».
Ասաց պովէտ աչքից արցունք թափելով,
Օ եւսի գահի առաջ ընկած տիսագին

— «Երազներով թէ սիրում ես զբաղուել,
Ասաց Օ եւսը, ինձ շետ դու մի՛ մարափիր,
Ուր էիր գու, երբ-որ աշխար բաժնեցաւ » : —
«Քու մօտ էի, ասաց պովէտ . անձանձիր

Աչքը ուզզած քու երեսաց ճաճանչին,
Ունկը երկնից ներդաշնակով հիացած.
Երի՛ր հոգուոյ, թէ զըմայլած քու լուսով
Այդ երկրաւոր պարգեւներից զորկ մընաց ։

— «Ամենայն ինչ ասաց Օ եւսը, տըւած է,
Չեն իմ աշուն, ենչ, շուկայ ու գինի.
Բայց թէ կ'ուզնու ինձ շետ ասկիւ երկներում
Այսուշեաւ թող նա քեզ միշտ բաց լինի» : —

Հելլէու :

ՎՐԱՏԱԿ

(U₁p b₁ b₂ L₁b₃ w₁ w₂ L₂b₄ b₅ t₁)

Դրբահիմ Պարսից երեւելի իմաստասէրը² երբ-որ տեսաւ մահի
մօտենալը՝ իր բոլոր կայանքը ընծայեց Հաչին³, բայց մատանին, որ
միշտ ձեռին ունէր՝ աւանդեց նորան, ով-որ բոլոր տէրութեան մէջ հա-
սարակաց կարծիքով ամենից խելքը եւ իմաստուն է համարվում. Հահը
նշանակած էր նորա կտակակատարը⁴: Այս պատուէրը մեծ դժուարու-
թեան եւ տատանութեան⁵ մէջ ձբդեց Հաչին. նա ուզում էր իմաս-
տուն Դրբահիմի խընդերքը ճիշդ եւ արդար կատարել, բայց չ'էր իմա-
նում՝ ում տայ: «Որա կարծիքով խելքը մարդուս ամեն արժանաւորու-
թիւններից բարձրն էր. բայց որովհետեւ ամեն յիմար ուզում է խելք
երեւել, ուստի շատերը սաստիկ կըվիրաւորուէին նորանից, եթէ նա
իրա կամքը ում եւ իցէ տար մատանին:

Երկար ժամանակ միտք էր անում Ծահը այս մասին . ամենելքեան
աչուղող եւ անհամընդութեալի սպասում էին նորա կլոտրական վճիռը :
Վերջապէս Ծահը այսպէս ուզեց վճուել Հրաման տալ բոլոր ժողովրդին
միասին հաւաքուել եւ երբ-որ նոքա կ'ժողովին՝ ասել բազմութեանը՝
«Ես կլստանայ մատանին՝ ով-որ կրվառէ այս երեք խընդիրը ⁷» Ի՞նչ է
աշխարիս երեսին ամենից օգտակարը, «ի՞նչ է ամենից հաճելին ⁸» եւ
ի՞նչ է ամենից հարկաւորը»: Եւ երեք օր նոցա ժամանակ տալ միաք
անելու :

Կահը խիստ բարի մարդ էր յիսուն տարի անընդհատ⁹ թագաւոր բելով՝ ուրիշ ցանկութիւն եւ նըստակալ¹⁰ չունէր, բայց եթէ երջան-

¹ պատմութիւն, повесть. ² փելառափայ, мудрецъ. ³ Պարսից, Պարսշ-ներու թագավորը, Шахъ. ⁴ կռակ կատարող, душеприкащикъ. ⁵ Հոգու, մարդուք, беспокойство. ⁶ դատաստանի կամ հարցմանքի որոշումը, решение. ⁷ հարցմանք, задача. ⁸ Հաւանելի, դուրական, մախրուլ, приятный. ⁹ անդադար, безпрерывно. ¹⁰ լերջ կամ վախճան, որին մարդ ցան-անում է համել, цѣль.

կայնել իր հըպատակ¹ ժողովուրդը : Վարծելով որ այս խմբի իրներու վճիռը շատ կարքիչ կ'օգնէ նորա բարի դիտաւորութեանը՝ միտք ունէր նորան տալ մատանին, ովոր կըկարողանայ այս հարցմունքներու պատասխանը տալ, որոնք մարդուս երջանկութեան համար խիստ կարեւոր² են :

Կահնակած օրը հրապարակի 3 մէջ մեծ բազմութիւն ժողովեցաւ :
Կահը եկաւ կանգնեցաւ իր ապարանքի 4 պատշամի 5 վրայ ու առաց
յետագայ խօսքերը . « Բարեկամնե՛ր , խմասուն Խրահիմը իր մահից
յետ թողեց այս մեծագին մատանին եւ պատուիրեց ինձ նորան տալ ,
ովոր ձեր մէջ ամենախելոքն է : Աթէ ես իմ կամքով կատարէի նորա
կտակը , դուք անպատճառ կը մեղադրէիք ինձ եւ կողմնապահ 6 կը կարծէիք .
ուստի ես լաւ համարեցի ամենիդ միասին հրաւիրել եւ ձեր առաջ եւ
ձեր յօժարութեամբ կատարել իմաստունի վերջի կամքը : Աս առաջար-
կում եմ ձեզ երեք հարցմունք . ովոր կը տայ նոցա ճիշդ պատասխանը՝
նա կը սահմանայ մատանին » :

Առաջինը այս է « Խնչ է աշխարիս երեսին ամենից օգտակարը » : « Փողն է , ասում էին ժլատմերը ⁷ եւ փողաբերմերը : - Անդորձ կրանք վարել , ասում էին հարուստները ⁸ եւ մեծատունները : - Փաղաքշանիքն ⁹ է , ասում էին դրանիկները ⁹ , նուաստութեալիր գլուխ-տալով թագաւորին : » Կահը չի բաւականացաւ այս պատասխաններովը : Ինազմութեան մշջից դուրս-եկաւ մի լեղջ բրահման ¹⁰ ու ասաց . « Ամենից օգտակարը աշխատանիքն է » : Կահը գարշելով նայեցաւ ցածրհոգի շողոքութներու վրայ ու շնորհակալ եղաւ բրահմանին : Հիմի պատասխան տուելք , ասաց . « Խնչ է ամենից հաճելին աշխարիս երեսին » : Հազարաւոք մարդիկ կանչում էին՝ փողը , զուարձութիւնները , գինին , ծխախոտը ¹¹ , գիւտութիւնը , տղիսութիւնը , եւ եւ : Թագաւորին հաճայ լինել , ասացեն դրանիկները : « Կարի գործել » , պատասխանեց բրահմանը :

¶ Երջապէս «Խնչէ ամենից հարկաւորը աշխարիս երեսին», ասաց

¹ Հնագանդ, օրէնքի եւ կառավարութեան տակ գտնուող, подданный.

² *խիստ հարկաւոր*, необходи́мый. ³ *մեյտան*, фа́тиги, *մեջ ընդարձակ* *դատարկ տեղ*, пло́щадь. ⁴ *թագաւորի կամ իշխանի տուն*, дворе́цъ, хо-
ромы. ⁵ балко́нь. *բալկոն*. ⁶ пристрасти́й. ⁷ *ծակացք*, *թագաւորեալ*, ску́пецъ. ⁸ *կեղծաւորութեամբ* *գովելը*, лесть. ⁹ *դրան յոց թագաւորի տան* *մեջ գլուխուղ մեծամեծ մարդիկ*, при́дворные. ¹⁰ *նորկաց փիլիսոփայ* *կամ քահանայ*, браминъ. ¹¹ *թագաւորութիւն*, *թիւթիւն*, табакъ.

Թագաւորը : « Դորա պատասխանն-էլ այնքան տարբեր էին , որքան եւ առաջին հարցմաններուն , ուստի յիշելը անդամ՝ աւելորդ է այստեղ :

« Կահը դարձաւ դէսի բրահմանը եւ ուղաց նորա պատասխանը իմանալ : Ամենից հարկաւորը աշխարիս երեսին ճշամ դուռը թիւն է , ասաց բարի եւ խելք բրահմանը : Կատ ուրախացաւ թագաւորը լսելով նորա իմաստուն պատասխանը . իսկոյն տուեց նորա մատանին . եւ այնուհետեւ միշտ խօսում էր նորա հետ զանազան առարկաներու վրայ , եւ խորդչուրդ անում էր կառավարութեան գործերու մասին . եւ վերջապէս յանձնեց նորա առաջին նախարարի¹ պաշտօնը :

Այս Կահի թագաւորութեան եւ այս բրահմանի կառավարութեան ժամանակ Պարսից ժողովուրդը անցուց բարերաստիկ² կեանք եւ վայելեց խաղաղ օրեր : Մինչեւ այս օրուայ օրը յետնորդք³ օրչնելով յիշում են բարի բրահմանի անունը :

Ո ս տ ի կ :

(Եռէր եղբայրական Քեր. Պատկանեանին).

Ուր ես արագ գլնում , խեղճ ոստիկ ծառին ,
Տի՛ս , չի ձըգեն քեզ ալեք անդունդը ծովին .

Ինչպէս անտէր որբիկ թշուառ , անպաշտպան ,
Որ ընկել է ձեռքը չարանենդ մարդկան ,

Չես ունենալ , ոստիկ , աղասութեան հնար ,
Օռհ կըլինիս , խեղճիկ , ալեաց չարաչար :

« Չեմ զարհուրում ծովից , ոստիկը ասաց ,
Կեանքը արդէն կորել է , վաղուց եմ ցամքած :

¹ վեղիր , մինչեր . ² երջանիկ . ³ սերունդք , որդոց որդիր , ոտոմք .

« Արազատ այն ծառէն ինձ պուկեց հովը ,
Ճիմի ինչ . Յուղ տանէ , ուր ուղէ ծովը .

« Ճիմուց դէսը ինչ է էլ ինձ մըլսիթար , —
Դալար ծառին կըլցէլու էլ չունիմ հընար » :

« Օիծեռնակ , ծիծեռնակ ,

Դու գարնան սիրուն թըլոչնակ ,

Դէսի ուր , ինձ ասա' ,

Թըլում ես այդպէս արագ .

Դու պատմէ՛ թէ ինչպէս

Վատ անտէր ու խեղճ եմ ես ,

Վիշտ լալով , ողբալով

Կեանքը մաշուել եղել կէս .

Անս , թըլիր , ծիծեռնակ ,

Ծանած տեղը Աշտարակ ,

Անդ շինի՛ր քո բունը

Հայրինի կըտուրի տակ .

Ինձ համար ցերեկը

Վութ է շըջում արեգը ,

Վիշերը թաց աչքիս

Քունը մօտ չի գալիս :

Անդ հեռու ալեւոր

Հայր ունիմ սըդառու ,

Որ միակ իւր որդուն

Սպասում է օրէ օր .

Ասի՛ր որ՝ չի բացուած

Ուսուամեցայ միացած

Վան ծաղիկ գեղեցիկ

Հայրենի հողից զրկած :

Երբ տեսնես դու նորա՝

Ինձից շատ բարեւ արա' ,

Ասա' , թող նըստի լոյ

Խըր պնդաղդ որդու վրասց :

Դէ՛ս , սիրուն ծիծեռնակ ,

Հոռացի՛ր , թըլի՛ր արագ —

Դէս Հայոց երկիրը

Ծանած տեղս — Աշտարակ :

Հարբած մարդու երկ :

Ուղիղ դնեստունից ես դուքս եմ գլնում ,

Փողոց , ա՛յ փողոց , էդ ինչ եմ տեսնում ,

Աջ գընամ , թէ ձախ՝ ծուռ են երկուսն-էլ ,

Փողոց , տեսնում եմ , դու-էլ ես հարբել :

Լուսին-ջան ու խօրդ ինչի՞ է ծըռած,
Մնկ աչքըդ կապուել, միւսըն կէս-բաց,
Դու-էլ ես հարբել, ո՛վ դու անանօթ,
Աշաւի՛ր ինձնից վաղուցուայ ծանօթ.

Բահ՝ էստեղ էստեղ, — տե՛ս, լասլուբներն-էլ
Չ'են կարող ուղիղ ոտքի վրայ կանգնել
Մնկ պարզ են վասվում, մէկ սաստիկ խաւար,
Կամ թէ պատից պատ կըպչում անդադար :

Աղբէր, ես գիշեր ամենքն են հարբել
Ինչ բան է մէնակ մէնակ ծոմ պաշէլ
Չէ, եղ կըլինի խաւակ գըժութիւն,
Ուրեմն նորից նոր դառանամ գնեստուն :

Բարոյական խրատներ եւ իմաստալից խօսքիր :

- 1) Խնքը իրան գովելը ծիծաղելի է, որիշին վասարանելը՝ ատելի:
2) Համեստ մարդոց մօտ գնալ-գալը գիւտ է, խակ անառակներու՝ կորուստ :
3) Ուսումը երջանկութեան ժամանակ զարդ է մարդու համար, խակ տարարախութեան օրերը՝ միմիթարութիւն :
4) Վիրքը հոգու տկարութիւնն է, թէ ուզում ես հիւանդ հոգիդ առողջացնել՝ լսի՛ր բանականութեանըդ ձայնին :
5) Ո՛չ չափազանց ամօթևածութիւնըն է գովելի, ոչ լիրը վայրա-
հաջութիւնը . պարկեշտութիւնն է նոցա ոսկի միջասահմանը :
6) Ովոր մանկութիւնից սովորութիւնն է արել իրա համար՝ ուտել որ կշտանայ, եւ խըմել, որ ծարաւը կըտրէ, սցդպիսի մարդը երբէք սովատանջ չի մեռնիլ :
- 7) Տգէտը նման է այն կոյրին, որ ցուալ չ'ունի ձեռին :
8) Թէ՛ ուզում ես թշնամիիդ յաղթել՝ բարի գործէ՛ նորա :

9) Պարդկային ցանկութիւնը պէտք է ամոքել եւ բարեխառնել, ան-
չնարին է յագեցնել (կըշտացնել):

10) Կա կ'ասուի ազատ, ովոր շարժում է այնպէս, ինչպէս որ
հրամայում է Աշտուածոյ եւ թագաւորի օրէնքը եւ իւր բարի խըզ-
մբանքը :

Սոս ջին մարդ :

350-2003

Դեռ էն ժամանակ, երբ-որ մարդս չ'էր ստեղծուած՝ երկրիս վրայ
ընակում էին զանազան կենդանիներ, որոնք ըստ մեծի մասին առաւել մեծ
էին քանթէ այժմեան ապրող անաստմները: Դեռ այժմ գըտնում ենք տեղ
տեղ աշագին գաղաններու կմախներ երկրիս մէջ, որոնք մեղ ցոյց են
տալի՛ թէ մարդկան ստեղծմանից առաջ այլ տեսակ է եղել աշխարիս
երեսը. որովհետեւ այդ գաղանների ատամները եւ ուկուները ո՛չ թէ
միայն իրանց վեթխարի հասակուն են աչք-ընկնում, այլ այնպիսի տեղե-
րումն են գըտնլվում, ուր այդպիսի կենդանիներ կլիմայի պատճառա-
չեն կարող բնակուել: Օսորինակ հիւսային Անբիրումը գըտնում են
աշագին փիղերու ատամներ, բայց այժմ ո՛չ մի փիղ չի կարող ապրել
այդ սառը կողմերումը: Ասմ այդ կենդանիները ուրիշ բնութիւն պէտք
է ունեցած լինին, կամ, ինչոր առաւել հաւանական է, — այդ երկիրնե-
րու կլիման ուրիշ եղած պիտի լինի: Մինչեւ այժմ մեղ հիացնում են
վաղուց կորած կենդանիներու ուկուները: Հարաւային Ամերիկայումը
Շունոս-Այրէս քաղաքի մէջ հարիւր ոտնաչափ գետնի տակին մի
վեթխարի կմախնք են գտել, որ ինչպէս երեւում է նախնի դարերից /է
մնացէլ: Այս մի այնպիսի աշագին յամբագնացի կմախնք է, որի առաջ
ունկեղծներին կարելի է նուրբ ասել փիղին՝ թեթեւ եւ ծովածիին՝ շնոր-
հաշուք: Դորա բարձրութիւնը եօթը ոտնաչափ է, երկայնութիւնը՝ տաս-
նընընը, ուրեմն առել երկայն քանթէ փիղը: Խտալիումը մի գոմեշի
դլուխ գտնուեցաւ գետնի մէջ, որի եղջ իւրները արմատի մօտ մինից
երկու ոտնաչափ հեռաւորութիւն ունեին, այնպէս որ՝ այդ կենդանին շատ
մեծ եղած պիտի լինի: Կոյնը կարելի է ասել Կոլանդիաումը գըտնուած



արագընթաց եղջերուի համար, որի եղջերները մին ծայրից մինչեւ միւսը տասնըշորս ոտնաշափ էին: Այս ասածներս միայն սակաւաթիւ օրինակներ են, որոչետեւ այժմ կան անթիւ բազմութիւն այդ չնաշխարիկ գագաններու կմախներից Արոպակի գանազան տէրութիւնների մէջ:

Չի կարելի կըտրական ասել՝ ի՞նչ է պատճառը, որ այդ կենդանիները այժմ չ'են ապրում, եւ ինչո՞ւ նոցա ուկորները տեղ տեղ ցրուած են կամ հողով ու քարով ծածկած: Հաւանական է, որ այդ պատճառել են ջրհեղեղները, որոնք ‘Այս ջրհեղեղից առաջ քանի անգամ երկրիս վերայ պատահել են: Հատ տեղ պարզ երեւում է, որ շատ երկիրներ՝ նա եւ բարձր լեռներ առաջ ջրով ծածկած եղած պիտի լինին. բայց պատմութիւնը մեղ ոչինչ չի կարողանում ասել այս աշագին փոփոխութիւններու վրայ, որ առաջ են եկել երկրիս մակերեւութիվ վրայ:

Յայսի բան է մենք չ'գիտենք—ե՛րբ եւ ո՞ր տեղ Աստուած մարդուն ստեղծեց: Հատ ժամանակ՝ անցաւ՝ մինչեւ-որ մարդիկ իրանց համար լեզու հնարեցին եւ մանաւանդ՝ գիրը: Խնչոր մեղ յայսին է նախածին մարդկան մասին, այդ բոլորը միայն կարծիք են. որովհետեւ ամեն աղդ իւր կերպի է մեկնում մարդկային աղդի գոյանալը: Մ'ենք չ'գիտենք եւ այն արդեօք բոլո՞ր մարդիկ մի զցոգից են առաջ-եկել թէ՝ Աստուծոյ հաճոյ է եղել շատ մարդկային զցոգեր աշխարիս զանազան կողմերում ստեղծել: Այս վերջի կարծիքը բաւական հաւանական է թուում, երբ-որ նայենք այն մեծ տարբերութիւնը, որ երեւում է զանազան մարդկային ցեղերու մէջ:

Վարդկային աղդի ծագման մասին ամենից բնականը Արբայեցւոց աւանդութիւնն է, որ մենք տեսնում ենք Առվևիսի առաջին գրքի (ծննդոց) մէջ: Այդ աւանդութիւնը բնութեան շատ յարմար է, եւ ցոյց է տալի՛ ի՞նչպիսի երեխայական կարծիք ունին Աստուծոյ վրայ: Այսքանը միայն յայսին է, որ առաջին մարդիկ (գոնէ Արոպացւոց եւ քանի մի Ասիական աղդերու նախահար) Ասիայումն էին բնակում, եւ ինչպէս երեւում է Միջագետաց մէջ: Երբ-որ նոքա բազմացան՝ տարածուեցան տեղէ-տեղ եւ գրաւեցին իրանց մերձակայ եւ շրջակայ երկիրները: Այսպէս՝ կամաց կամաց առաջ-եկան աղդեր, որոնք մի քանի ժամանակից ե՛ւ լիզուով, ե՛ւ բարբով, ե՛ւ զգեստով, նա՛ եւ՝ կերպարանքի գիծերով մին մինից սկսեցին տարբերելու: պատ-

ճառ-որ՝ կենցաղավարութիւնը եւ կլիման մեծ ներգործութիւն ունին մարդուս արտաքին կերպարանքի վրայ

Ամեն աղդ նոր նոր գիւտեր արաւ՝ թէ կարօտութիւնից ստիպուած եւ թէ պատահմունքով: Պղինձ հալելու եւ մետաղ գործելու արուեստը վաղուց պէտք է հնարուած լինի: Աստուած իւր առանձին ‘Կախախմանութեամբ մարդուս ամենից առաջ այն գիւտերն է անել տուել, որոնք նորան ամենահարլաւորն էին: Մ'եծ կորուստ չ' մեղ համար, եթէ մենք չ'իմանանք՝ ի՞նչ կեանք անցըլ են մեր նախահարք. բայց կարծելի է որ նոքա որասորդ եղած լինին, թէ իւրեանց պարէնը ձարելու համար, եւ թէ վայրենի գաղաններից աղատուելու. նմանապէս հաւանական է, որ կարօտութիւնը շատ վաղուց ստիպել է մարդուն դէնք շնելու. այդ մենք տեսնում ենք գրեթէ ամենայն վայրենի եւ կղզաբնակ աղգերու մէջ: Վարդս իսկոյն մի ուրիշ գիւտ-էլ արաւ: ‘Կա տեսաւ որ շատ կենդանիներ կան, որ այնքան կատաղի չ'են եւ հեշտութեամբ ընտանենում են: Այսպէս առաջ-եկաւ հովուութիւնը եւ խաշնարածութիւնը՝ Դորանից ուշ մարդ հասկացաւ սերմնացանութեան եւ բնակարան շինելու օգուտը: Հիմի հասկացաւ մարդս այն շահը, որ կարող է յառաջ գալ նորան միմեանց հետ միաւորուելից: Այսպէս հասկատուեցան մէկ տեղ շատ մարդիկ. մինը օգնում էր միւսին այն բանով, ի՞նչոր ինքը ունէր կամ գիտէր:

Խնչպէս որ ամենաբարի Աստուածը մարդուս առաջնորդում էր զանազան գիւտեր անելու, նոյնպէս նա մարդուս միտքը բերեց առաջին հաւատոյ եւ կրօնքի զգացմունքը, Խնչպէս պատահեցաւ այդ մենք չ'գիւտենք. բայց հաստատ գիտենք, որ այդ եղել է, պատճառ-որ՝ դժուար կարող էր մարդս լոկ մտածմնեքով հանել այն մըտքին, որ միակ Աստուած պէտք է պաշտել. ուր մընաց որ առաջին մարդիկ տգէտ եւ անփորձ էին այդ խորհրդածութեանց համար: Ուրեմն Աստուած յայտնուեցաւ մարդկան: Բայց նոցա հաւատոյ կարծիքը յարմար նոցա խելաց՝ խիստ թոյլ եւ անկատար էր: ‘Ոքա այսքան միայն գիտէին որ՝ «կայ մի «Աստուած», որ ստեղծել է ամեն բան, ի՞նչոր մենք տեսնում ենք, — «ծառերը, որ մեղ պտուղ են տալիս, արեւը, որ մեղ ջերմացնում է. անա բարի եւ հզօր Աստուած է. մենք պիտի կատարենք, ի՞նչոր նա «մեղ հրամայում է, թէ չ' նա մեղ կ'պատժէ. նա է, որ փոթորիկ «է հանում եւ ամպերով գոռում է. նա ուզում է այն, ի՞նչոր մեղ օգուտաւէտ է. մենք պիտի ուրախութեամբ հնազանդինք նորա սուրբ կամացը»: Ի հարկ է շատ չի տեւեց նոցա հնազանդութիւնը Աստուծոյ

պատուիրանքին : Օգայականութիւնը նոցա, համեմատելով խելքի եւ համարի հետ՝ շատ զօրեղ էր : Կոքա փորձեցին Աստուծոյ օրէնքը զանց առնելու, եւ տեսան որ չարութիւնը երբէք անպատիժ չի մընալ եւ անձին վնաս բան է : Ուրեմն սկսեցին վախենալ Արարուցից եւ թագ-կենալ նորանից, եւ մտածում էին՝ ի՞նչպէս անենք, որ Աստուծոյ հետ կրկին հաշտուինք : Այդպէս կամաց կամաց նոքա զոհ (մատաղ) անելու վրայ-եկան : Տեսան որ ծուխը (մուխը) դէպի երկինք է բարձրանում, ուր-որ կարծում էին Աստուած կենում է . ուրեմն այդ բարձրացած ծուխը նորա համելով հաճելի կ'լինի : Այս անկատար հաւատը ասվում է Կահապետական կրօնք :

Բայց (ինչպէս Խրայեցւոց պատմիչք ասում են) որ մարդիկ քանի գնացին՝ այնքան աւել չարացան եւ դարձան Ճշմարիտ Աստուածպաշտութիւնն, այդ ժամանակ Աստուած վրձնեց բոլոր մարդկան աղքը բնաջինջ անել . եւ այդ աղէտքից ազատեց միայն Կոյին եւ նորա գերդաստունը, որ Աստուծոյ երկիւղ ունէր : Քրհեղեղի պատմութիւնը ամենին յայտնի է : Կոյայ սերունդք այնքան բազմացան, որ պարտաւորեցան կրկին մին մինից բաժանուել, եւ այդպէս առաջ-եկան զանազան աղքեր : Հատ կարելի եւ հաւանական է, որ Քրհեղեղը տարածուած լինի միայն երկրիս մի մասին վրայ, եւ միայն այն մարդիկը կորած լինին, որոնք կենում էին միջին Ասիայում, այնինչ ուրիշ աղքեր այդ ընդհանուր կործանումից ազատուած լինին : Բայց այս մթին եւ անյայտ ժամանակի վրայ միայն այն է մեղյայտնի, որ մենք դորա վրայ սակատեղեկութիւն ունինք : Քրհեղեղը պատահած պիտի լինի 2004 տարի Քրիստոսի ծընունդից առաջ :

(Պարգմանութիւն՝ ի գերմանականէ).

Արմետ Բագրատունի.

(Աղդային Վէպ)

Ինչ է խըմբել ժողովուրդը Բիւզանդիա քաղաքին,
Ինչ է սպասում բազմութիւնը Զիարշաւ հրապարակին.

Սուրբ Սովիտա եկեղեցւոյն գասիթքը ամեն են դարստոկ, Փողոցները են տայլի, գոց է ամեն մի կը թափակ . Ինչ է բազմել կայսրը Մօրիկ բարձրաւանդակ յառագաստ, Ինչ են պատել պալատականք նորա գահոյքը ըդգաստ : Հառաջում են աշեղ ձայներ, դող են ձըդում ամեն սիրտ, Գաղանաներու գոչ է լըավում մարդկան աղքի արհաւիրք: Ժողովրդեան տօն է այսօր Բիւզանդիա քաղաքին, Բազմութեանը տօն է այսօր Զիարշաւ հրապարակին. — Պիտի դատեն Բազրատունեաց քաջ նախարար Ալմբատին, Պիտի դատեն ու պիտ ձըդեն, որ կուր Լինի գաղանին: Սա այն Ալմբատն է, որ անցաւ խիտ անտառով մի լցու օր Հեծեալգոլով, ինչպէս կ'ասեն, ձի յաղթանդամ եւ հըզօր, Յարձակեցաւ, բընեց ոստը հարիւրամեայ մի ծառին Եւ երանօք բարձրացըրեց հետը իրա հըզօր ձին. Սա այն Ալմբատն է, որ չուզեց լըսել Վայսեր հրամանին, Զըյօժարեց գընալ Ուրակէ հեռու իրա աշխարին. Զըյօժարեց թողնել անտէր մեր անտերուն չայստան, Որ չըլինի մեր աշխարը Յունաց ոտից չար կոխան: Իերին առաջ այս Ալմբատին թագաւորի գահի մօտ, Եւ կարդացին դատավլընիու (Յունաց յաւիտեան ամօթ). «Անհընազանդ եւ դատաձան գործոց նորա պատճառաւ՝ Գաղանաներու առաջ ընկնել» նորա վրձիու հատաւ : Իսկոյն եկան դահիճները, մերկացուցին հըսկային Եւ հազցըրած անդրավարտիք՝ ձըդեցին մշջ Ախնիկին : Եւշան տուեց թագաւորը, որ ըսկըսեն հանդէսը. Բացին գուռը, մըտաւ դանդաղ մի արջ Ախնիկին ներար, Արձակեցաւ քաջի վերայ գաղանն ուժդին կատաղի, Բայց հըսկայի աղաղակից անշարժ մընաց իր աեղը: Առաջ-գընաց այլն կորովի հաստարագուկ Ալմբատը, Ումեղ ձեռօք զարկեց ջարդեց չար գաղանի ձակատը. Զէն չիշանեց վայրագ արջը, մընաց անշարժ ու անշունչ. Քաջն լըոիկ ըսպատում էր իւր վրձիու անտրատունջ. Կրկին անդամը արձակեցին քաջին վերայ աշեղ ցուլ, Կրկին հըսկան աղաղակեց հըզօր ձինով իւր անդուլ. Իընեց ջլոտ ձեռներովը ցուլի երկու եղջերից, Մինչյոդնեցաւ ցուլն աշեղ իւր պարանոցն քարշելից:

Կա զօր-արաւ եւ խորտակեց եղջեւրները աշագին ,
Մինչ թուլացած ցուլը անզարդ դարձաւ փախուստ միլրագին .
Բայց եւ այդպէս չազատեցաւ քաջի ձեռէն թրշնամին ,
Բըռնեց Արմբատ երկու ձեռքով նորա կրծղակն ու աղին ,
Քաշեց հանեց ոտից կըճղակն . Խեղճկենդանին զարհուրած
Փախաւ գընաց երեք ոտով՝ չորրորդ ոտը վեր-ապահած :
Այն ժամանակ Կայսրն Աօրիկ տուեց մի նոր հըրաման ,
Որ բաց-թողնեն քաջի վերայ մի սէգ առիւծ ափրիկեան :
Աըռնչելով նա գուրս-ալրծաւ , յարձակեցաւ քաջին դէմ ,
Բայց մեր Արմբատ նախարարին հասաւ օգնութիւն վերէն .
Առաջ-դընաց դէպ առիւծը , բըռնեց ականջէն նորա ,
Եւ յաջողեալ իւր զօրութեամբ՝ նըստաւ գաղանի վերայ ,
Բըռնեց հըզօր իւր ձեռօքը խըռչափողը գաղանին ,
Աեղմեց , սեղմեց եւ սատակեց իւր անասուն ոտիսին :
Թամնդաց երկիրն աղաղակին ապուշ կրթած ամբոխին ,
Որ զարմացած զօրութեամը հաստակորով հըսկային՝
Բարձրացուցին իւրեանց ձէնը , ողորմութիւն խընդեցին
Թագաւորէն , որ աղատէ կարծեցեալ դաւաճանին :
Բայց նա նըստէր իւր սատակած թշնամւոյ բաշն գեռ գրկած ,
Որ փոքը մի դադար առնու այդ կըսուի մէջ վաստակած .
Արիւնն հոսում էր քանի տեղ գաղանայալթ հըսկայից ,
Բայց արտասուաց առատ աղբիւրն նա չ'էր հոսում աչերից :
Այն ժամանակ պարկէշտ , շըքեղ եւ գեղեցիկ թագուհին
Խընդելքաջին ողորմութիւն ոտքը ընկաւ արքային :
Պաղատելով միտքը բերեց՝ ինչպէս առաջ ժամանակ
Արմբատ նորա սիրելին էր եւ որդեգերըն մենակ ,
Երբ թշնամեաց ասածներուն նա իւր ականջն չ'էր բացել
Եւ ոսոխաց բամբասանքին նա իւր ուշկը չ'էր դըքել :
Կայսրն Աօրիկ միշտ զարմացած քաջ Արմբատի զօրութեան ,
Հըսկայագէմ կերպարանքին եւ կորովի սլընդութեան՝
Խոնարհեցաւ պաղատանքին իւր նազելի դըշխոյին
Եւ կատարեց խընդըրուածքը աղաղակող ամբոխին :
Հրաման տուեց , որ դադարի այս չարաշուք պատուհաս ,
Ողորմութիւն արաւ նորա՝ չ'առնելով անձին վընաս .
Առաջ-եկան պալատականք՝ «Արցցէ՛ արքայ» գոչեցին ,
Եւ վաստակեալ Կախարարին փառօք բաղնիս համբեցին .

Օգեցուցին պերճ պատմուձան , ոսկեպըսակ ըդգեստներ ,
Հրաւիրեցին Կայսեր ընթրիք , ուր պատրաստ էր խումու կեր .
Փառօք բերին Կախարարին ճաշի սեղանի առաջ ,
Ուր ժողովեալ կանգնած կային Յունաց մեծամեծքըն քաջ ,
Կըստեցուցին թագաւորի եւ թագուհւոյ մէջ տեղը .
Այսպէս շըքեղ պայծառացաւ Բագրատունի անմեղը :

Կայրաքաղաքումը կրթած երիտասարդ .

Տեղը եկաւ՝ չայ է նա , տեղը եկաւ՝ այլազգի ,
Իրօք ոչ այդ եւ ոչ այն է , այլ ծընունդ մի նոր ազգի .
Հագնըում է նա միշտ en grand , ման է գալիս à la chique ,
Ճաշէ ուտում՝ ուր էք կարծում , chez Dussot կամ Dominique !
Կարդում է նա Debats , Morning , ո՛չ հազմավէպ , ah ! si donc !
Գրանսերէն-էլ կոտրատում է , — հայերէն է տավածուն .
Օարթում է նա ուղիղ մէկին , անկողնի մէջ թէյ խըմում ,
Կախանաշիկն է երեքին գաղղիացի պանդոկում .
Վեցին քառորդ ճաշի ժամ է չընաշխարիկ մէր չային ,
Ո՛չ թէ ստիպուած է այդ անել , այլ որ վըրան չի խօսին .
Ուշի ուշով հետեւում է Պետերբուրգի լուրերուն ,
Դերձիկից-էլ ճիշդ տեղեակ է новомодный շորերուն .
Թէ եւ զուրկ է մուզիկայից , բայց opera սիրում է ,
«Bosioի» անոյշ ձէնից նորա խելքը գընում է :
Պինդ խօսում է ինչոր կանխաւ feuilletonումն է կարդել ,
Խօսքով աշխար կործանում է մեր պարոնը ան արգել .
Եւսիր , Դունդաս ու այլ անձինք են նիւթնորա զըրոյցին ,—
Պախարակում է ճիւգօին ու սիրում է Կիկէնսին .
Կա սիրում է , նա ատում է ո՛չ սեպչական իր խելքով ,
Կա խըմում է , նա ուտում է ո՛չ իր բերնի ճաշակով .
Նորա խելքը feuilletonն է , պրէս-կորանտն է ճաշակը .
Ու Գիտութանց Շեմարանը է որ-ասես պանդոկը :

Վանի տարի քաշ է գալի Պետերբուրգում այս կերպով ։ Օ
Ու յետ դառնում իր հայրենիք գարտակ խելքով ու ջիբով ։
Աշնուհանութեան պահանջմունքը նորա մեծ են և անհեթեթ,
Միայն ինքն է խելքը գիտուն, իսկ այլք՝ կոպիտ ու տըդէտ.
Այդ չէ զարմանիք, որ յիմարը ուղէ պատիւ իր անձին,
Կ'ա' յիմար է, որ անարժան տայ պատիւ յիմարին.
Ընութենէ խելազուրին Պետերբուրգը խելք չի տալ
Մեծ հունար չէ փողոցներում անընդատակ միշտ ման-գալ:

Վախի ջեւանի երգ ։

Վախջուան քաղաք Տօն գետին քովը
Օ արդարուած, պայծառ շին տուներովը.
Լաւ կեանք վայելել ովոր ուղենայ՝
Հանդիստ ապելու Վախջուան կինայ :

Աղջիկներ շատ կան սեւ աչքով ունկով,
Գեղեցիկ տեսքով ու բարի վարքով.
Ովոր ուղենայ իրէն հարա գըտնել
Խըտրելզ ուխտի տեղն պէտք է քալել :

Արիցէք տըզաք, մէկտեղ թօփ ըլանիք,
Աղջիկ բնտրելու խըտրելզ երթանիք.
Կըտեսնունիք անտեղ սկսակիւներ սիրուն,
Հետը քալելով մօր, մօրքուրներուն.

Հագուստնին զարդար աթլաս ու կլեասէ,
Վ ըսցի ձըգածը սեւ մօռէ խաս է.
Աքքերը չորս սէմիթ ասդին ու անդին՝
Աչափ կըտրիչին կըկըպէին աչքին :

Կենձ տըզոց համար տուզախ կըտլնին,
Չ'իմացած կուգան շուտ մէջը կ'իյնին:
Աշխման աշխարքի ասպէս է վարքը —
Խաս հագուստ մարդոց կըտանին խելքը:

Խակական երջանկութիւն .

Մի գեռահաս հովիւ մի գարնան պայծառ առաւօտ կանանչ հովիսի¹ մէջ արածայնում էր իր ոչխարները ու սրտի ուրախութիւնից մէկ տաղեր էր ասում, մէկ՝ պար էր գալի: Մի որարդ անտառից գուրս-գալու ժամանակ տեսնում է նորա եւ ասում է «Ահ՛քէլիս, ինչո՞ւ ես այդքան ուրախ»: Տղան պատասխան է տալի: «Ինչո՞ւ չի պիտի ուրախ լինիմ. մի թագաւոր չի կայ աշխարումըս, որ ինձանից հարուստ լինի»: «Չեմ հասկանում» ինչ է միտքը այդ ասելով», պատասխանեց որարդը: Տղան ասաց՝ «Պարզ եւ կապուտակ երկնքի մէջ ինձ-էլ այնքան լուսաւորում է արեգակը, ինչքան եւ թագաւորին. սար ու ձոր ՝ ինձ համար-էլ այնքան են ծաղկում, ինչքան եւ նորա. երկու ձեռքը հարիւր հազար ոսկու հետ չ'եմ փոխիլ. երկու աչքը թագաւորի իլած-չիլած ակն ու մարդարիսներից վեր աժեմ: Այդ գեռ եւս ամենը չէ՝ ինչ-որ ինձ պէտքն է ունիմ, պատճառ-որ պէտք եղածից աւել չ'եմ ցանկանում: ամեն օր կուշտ ուսում խըմում եմ. հագուստի կարօտութիւն չ'ունիմ. տարեկան ոռմիկը² բաւական է մնացած բաներու համար: «Դորանից յետոյ կարո՞ղ ես ասել, որ թագաւորը ինձանից աւել ունի»:

Որսորդը ժըպտաց ու ասաց, «Աշաճը ձշմարիս է, որդեակ՝ թէ որ ուղում ես միշտ երջանիկ մնալ միշտ այդ խորհրդով կաց»:

¹ долина. ² охотникъ, егеръ. ³ оврагъ. ⁴ жалование.

Հարկաւոր գիտելիք.

1. Փող.

Փոփոխական առուտուրով¹ պարապում են միայն այն ազգերը, որոնք լուսաւորութեան ամենաստոր աստիճանումն են. բայց որ կամաց կամաց կրթութիւնը մըսնում է նոցա մէջ եւ նոքա սկսում են հաղորդակցութիւն ունենալ դրացի ազգերու հետ՝ խկոյն կարօտութիւն զգում են փողի, այսինքն՝ այնպիսի առարկայի, որով ամենի յօժարութեամբ, ամեն տեղ եւ ամեն ժամանակ կարելի է ստանալ մի ուրիշ առարկայ։ Փողը առաջի անդամ յայտնվում է այն ազգերու մէջ, որոնք պարապում են անասնաբուծութիւնով². այդ պատճառաւ ամեն բան նոքա զնահատում են անասունով, զորօրինակ՝ Խալմուս կամ Արար ազգը փոխանակ ասելու՝ «այս առարկան այսքան ուռւր լի կ'արժէ»—ասում է՝ «այս առարկան գինը այսքան գլուխ ու չխար կամ ուղարք է։ Խատինաց պեկունիան խօսքը, որ կընշանակէ փողը գուրս է գալի պեկուս խօսքից, որ անասուն, պահար ասել է։

Մենք Հայերս մասնաւոր անուն չ'ունինք այդ խօսքի համար. մեր նախնիք³ արծաթ են ասել. մեր ժամանակուայ Հայերը մասամբ ստակ են ասում եւ մասամբ—փող. վերջինը կարելի է փոխ, փոխել խօսքերից կազմուած լինի։ Մի քանի երկիրներումը, (զորօրինակ Ափրիկայի) փողը շինում են քարաղից⁴, կտաւից, կաշիից եւ խեցիներից⁵. Բայց ամենից յարմար նիւթը հրահալին⁶ (մետաղն) է, պատճառուոր ամուր է եւ ամեն ձեւ կարող է ստանալ։ Վարծիք կայ, որ մետաղէ փողը Փիւնիկեցիք հնարած լինին։ Առաջի անդամ փողի տեղ գործածում էին որոշ ծանրութեան մետաղ. յետոյ սկսեցին նորա վերաց դրօշմել⁷ դինը եւ շինելու տեղը, եւ այդպիսի մետաղէ փողը դրամ (մօնէթա) անուսնեցին։ Հին Ապարատի փողերը սոլորաբար երկաթէ էին։ Անցեալ դարումը հնարեցին թրդթաղրամ⁸, որի շարժառիթը⁹ այն էր, որ մետաղէ դրամը ծանր գոլով մեծ անյարմարութիւն էր վա-

¹ торговля. ² скотоводство. ³ предки. ⁴ каменная соль. ⁵ раковина.

⁶ металль. ⁷ чеканить. ⁸ ассигнация. ⁹ побудительная причина.

հառակաների համար տեղէ տեղ մանացնելու, որով դըժուարանում էր առուտուրը։ Թողթագրամը ուրիշ բան չէ, բայց եթէ վկայագիր, որով կարելի է փողերանոցից¹ ստանալ նորա մէջ նշանակած գումարը ուկիով կամ արծաթով։ Թու՛ թղթէ եւ թէ՛ մետաղէ դրամը զմնազան գիալուածներումը փոփոխվում են. մետաղէ դրամը այն ժամանակ փոխվում է, որ ժամանակ որ մետաղի գինը ինչնում է կամ բարձրանում է. իսկ թղթագրամը այն ժամանակ փոխվում է, երբ-որ մի տէրութիւն պատերազմներու պատճառաւ կամ ուրիշ հանգամանքներէ թուլացած՝ չի կարող նոցա տեղ փողերանոցից լիակատար դուրս-տալ մետաղէ դրամ։ աչա՛ այդ է լինում պատճառը, որ շատ անգամ թղթագրամը կորցնում է իւր արժէքի մի մասը կամ միանգամայն դին չի ունենում, ինչւ պէս-որ պատահեցաւ Փրանսիաի Յեղափոխութեան² ժամանակ։ Կայ իսկական եւ հաշուեկան փող. իսկական ասվում է այն փողը, որ ունի իրա համար սեպհական դրամ, զորօրինակ՝ արծաթ ուռւր լին, կէսնոցը, քսաննոցը, տասննոցը³ եւ. իսկ հաշուեկան ասվում է այն փողը, որոնց դրամը չի կայ, այլ միայն հաշուի համար գործածում է. զորօրինակ՝ թղթագրամը ուռւր լին, չին ալթինը, Հոռվլմայցւոց տալանտը, Պարաից թումանը եւ։ Լուրոպացւոց գլխաւոր եւ սոլորական փողերը դոքա են. Ուսուի ուռւր լին, իմպերեալը, կէսիմպերեալը. Աւտարիացւոց արծաթի գուլդէնը, որ հաւարում է Ուսուի 2½ ուռւր լին. թղթէ գուլդէնը հաւասար է 2 ուռւրի թղթագրամի, Պրուսի եւ Սակսոնի թալէրը, որ հաւասար է Ուսուի ուռւր լին, Շաւարացւոց գուլդէնը նմանապէս հաւասար է 2 ուռւրի թղթագրամի. Գաղղիացւոց Լիվը կամ Փռանկը հաւասար է 90 կոպէկ թղթ. Անդլիացւոց շիլլին կը հաւասար է 115 կոպ. թղթ. ստեռլին կը հաւասար է 23 ուռւր. թղթ. Հոլլանդացւոց գուլդէնը կամ ֆլորինը հաւասար է 180 կոպ. թղթ. Ապանացւոց պիաստը մօտ 5 ուռւր. թղթ. Օսմանցոց գուլուռը հաւասար է 20 կոպէկի։

¹ монетный дворъ, банкъ. ² революція. ³ рубль, полтинникъ, двугривен-ная, гривенникъ.

Ա կ ա ր ի չ

(նուէր եղբայրական Յ. Պատկանեանին)

Ա կ ն ա պ ի շ , ա ն ձ ա յ ն , խ ո ր հ ո ւ ր դ ժ ա կ ա ս տ ի դ ,
Պ ա ս տ ա ն ի ո ւ ր ե ս մ ը տ ք ո ւ լ մ ո լ ո ր ա ծ ,
Վ ե ր կ ո ւ վ ր ձ ի ն ն ե ր ց ի ր - ց ա ն ա ս տ ի դ ,
Վ ը շ ե ա յ կ ր ա ւ ր ք ո ւ հ ա ն դ է պ փ ռ ա ծ .

Հ ո ւ ռ - տ ո ւ ր ա չ ե ր ը դ , ն ա յ է գ է ս ո ւ դ է ն ,
Տ ե ր ս , ք ե զ ձ ա ղ ր ո ւ մ է ա ն մ ի ս ա մ բ ո ւ ս ր ,
Օ ա ր թ ի ' ր , ս ի ր ե լ ի , ա յ դ ա ն ո ւ շ ք լ ն է ն ,
Գ ո ն է մ ի ա ն գ ա մ հ ա ն է ' ք ո ւ ո ւ ս ր ,

Ի ա յ ց դ ո ւ ն ե ր ո ւ մ ե ս ն ո ց ա վ ե հ հ ո գ ւ ո ւ լ ,
Խ ո ւ լ ե ս ա շ լ ս ա ր ի ո ւ ն ա յ ն շ ը շ ո ւ կ ի ն . . .

Չ ա ն կ ա ր ծ ա չ ե ր ը դ փ ա յ լ ե ց ս ո ւ ր ը շ ն ո ր ք ո ւ լ ,
Հ ը ս կ ա յ ի ս ի ր ա ւ ր դ թ ը ն դ ա ց խ ս տ ո ւ թ ի ն :

Ա ռ ի ր վ ր ձ ի ն ը , թ ա ց - ա ր ի ր ն ե ր կ ո ւ լ ,
Հ ո ւ ն չ տ ո ւ ի ր ա ն շ ո ւ ն չ կ ո վ ի ս տ կ ո ւ ի ն ,
Ե ր կ ի ց խ ո ր հ ո ւ ր դ ը մ ե կ ն ե ց ա ւ ք ե զ մ ո ւ լ .
Ք ե զ ա ն կ ա ր ե լ ի ն ա ն յ ա յ տ է բ ն ա ւ ի ն .

Ա է ր , ա տ ե լ ո ւ թ ի ւ ն , հ ա ն ձ ա ր , բ ա ր կ ո ւ թ ի ւ ն
Տ ո ւ ի ր պ ա տ կ ե ր ի ն մ ա տ ի դ շ ա ր ժ ո ւ ա ծ ո ւ լ ,
Խ ն չ - ո ր չ ի յ ա յ տ ն ե ց հ ա ր տ ա ր ի լ ե զ ո ւ ն
Դ ո ւ պ ա ր դ յ ա յ տ ն ե ց ի ր ա ն ձ ա յ ն խ օ ս ո ւ ա ծ ո ւ լ :

Ա պ լ ե ց ա մ բ ո ւ ս ը . վ ա զ ե ց յ ա ս ա ջ ե ց
Ք ո ւ կ ե ն դ ա ն ա գ ի ր պ ա տ կ ե ր ի դ ի մ ա ց ,
Ծ ն կ ա չ ո ք զ ը ն ո ւ ս ո ւ հ ա լ ո ւ է խ ը ն կ ե ց ,
Գ ո ւ չ ե ց մ ե ծ ա ձ ա յ ն « Դ ր ա է ի մ Ա ս տ ո ւ ա ծ » :

Ի ա յ ց , ա' լ ս , ք ո ւ ա ն ք ո ւ ն ժ ա մ ե ր ո ւ ճ ի գ ը
Ք ա ն ի մ ի ա ր ծ ա թ հ ա ղ ի ւ գ ի ն դ ը ր ի ն ,
Ա տ ե ղ օ լ ը դ դ ա ր ձ ա ր ք ո ւ խ ե ղ ձ ի թ ը ,
Ա կ ե ր շ ա ր ե ց ի ն շ ո ւ ր ջ ք ո ւ պ ա տ կ ե ր ի ն :

Վ ե ր ջ ի ն գ ա ս ո ւ ն :

Ե ր դ օ ր հ ա ս ա կ ա ն ի :

Գ ա ր ո ւ ն է ե կ ե լ ն ա խ շ ո ւ ն թ ե ւ ե ր ո ւ լ ,
Վ ա խ շ ո ւ ն թ ե ւ ե ր ը պ է ս պ է ս ձ ե ւ ե ր ո ւ լ ,
Գ ո յ ն գ ո յ ն ձ ա ղ ի կ ն ե ր՝ կ ա ր մ ի ր ո ւ ս պ ի ս տ ա կ ,
Վ ա ր դ , մ ե խ ս ա կ , շ ո ւ շ ա ն ա մ ո ւ շ հ ո ւ ե ր ո ւ լ :

Ե ր կ ի ն ք ո ւ ե ր կ ի ր ք ե զ տ ո ն ե ն , գ ա ր ո ւ ն ,
Օ ի ե ս ք ա ն ց ա մ ե ն ե ղ ա ն ա կ ս ի ր ո ւ ն .
Վ ա ա ն ձ ե ր ց ց ո ղ է ա ռ ա ս տ ' ի վ ե ր է ն ,
Դ ր ա օ ր հ ն ե լ տ ա յ ք ե զ ե լ ե ր կ ի ր հ ա ւ ե ր ո ւ ն :

Ո ս կ ի ա ր ե ւ ը փ ա յ լ է ք ե զ վ ե ր է ն ,
Կ ե ն ս ա ր ե ր հ ո վ ը փ ը չ է ' ի վ ե ր է ն ,
Ա շ և , ա ղ ն ի ւ գ ա ր ո ւ ն , ե ղ ա ն ա կ ս ի ր ո ւ ն ,
Ա ր դ ե ր օ ք դ ո ւ ի ն չ ք ա ղ դ ր ի ր ի ն ձ Տ ե ր է ն :

Գ լ լ ս ա ք ա ր շ ե ր ժ ա մ ' ի պ ա ր տ է զ ն ա յ գ ո ւ ն ,
Ա լ ս ո ւ վ ա խ ք ա շ ե ր ն ե ս ա ն դ օ ր ն ' ի բ ո ւ ն ,
Զ ի կ ա յ ի ն ձ հ ա ն դ ի ս տ , ց ը ն ձ ո ւ թ ի ւ ն ս ր տ ի ս ,
Ե ս վ ա զ ե ր մ ո ո ց ե լ զ ի ն չ ա ն դ ո ր ի է ք ո ւ ն :

Մ ե ռ ա ծ , պ ա տ ա ն ք ա ծ դ ե տ ն ի ն կ ե ա ն ք տ ո ւ ա ր ,
Տ ե ր ե ւ թ ա փ ձ ա ո ի ն ս տ ո ւ ե ր ա խ ի ս տ ա ր ,
Ք ե զ թ ո չ ն ո ց ե ր ա մ հ ա ն դ է ս կ ա ն չ ե ց ի ր , —
Ի ն ձ մ ե ն ա կ լ ս ը լ ձ ի ս է ս պ է ս մ ո ո ւ ա յ ա ր :

Ա ռ ա ջ գ ն ա , գ ա ր ո ւ ն , դ է պ չ ի ւ ս ի ս ն ' ի խ ո ր ,
Գ լ ն ա ' կ ա ն ա ն չ ց ո ւ ր դ ո ւ ս ա ն դ ս ա ր ո ւ ձ ո ր ,
Ո ր ո ն ց ա ն չ ա մ բ ե ր ք ե զ կ ա ն ' տ ո ւ ր բ ա ր ե ւ ,
Ք ո ւ ր ա խ գ ա լ ս տ ե ա մ բ ն ո ց ա զ ո ւ ր :

Կու գաս գալ տարի, դու ինձ կու գըտնես
Ո՛չ՝ ի մեր այգին եւ ո՛չ՝ ի պարտէդ,
Այլ անդարթ քընով հողի տակ պառկած,
Գերեզմանագար մի վրաս կը տեսնես :

Կոամբամբուլին էն օղին է ,
Որ մեղի քաջ ծանօթ է ,
Որոյ համը չի տեսնելը
Ուսանողին ամօթ է .
Իսյց հանապաղ , իմ սիրելի ,
Մենք կոնծում ենք Կոամբամբուլի ,
Կոամբամբիմբամբուլի Կոամբամբուլի ,

Հայրա անդադար ինձ գըրտում է
«Որդի-ջան շուտ աւարտէ ,
Ժամանակդ արագ անցնում է ,
Տե՛ս գրերը լաւ սերտէ ».
Իսյց նորս պարոն որդին
Կոնծում է Կոամբամբուլին .

Թէ դարդն ու հոգաը ինձ նեղում է ,
Թէ իմ քէֆը տեղը չէ ,
Թէ աղջիկը ինձ խարում է ,
Ու էլ հաւասարիմ չէ .
Կասեմ «Աղջիկ , իմ նազելի ,
Քու տեղ կ'սիրեմ Կոամբամբուլի».

Թէ լերդս ու թոքը իմ մաշուել է ,
Գլուխս-էլ սասիկ ցաւում է ,
Թէ որ խմելն ու քէֆ անելը
Ըսժիշին ինձ արդելում է .

Իսյց ինչ ցաւ կ'ուզէ իլի ,
Ես կ'կոնծեմ Կոամբամբուլի .

Երբ մայրս ինձ մի հարս հարել է ,
Ասում է որ պլսակուիմ ,
Եւ պարտքն ու կարգն ինձ ստիպել է ,
Որ ես ճաշ ու քէֆ սարքեմ .
Ես ճաշի տեղ , իմ սիրելի ,
Վ'առնում առաս Կոամբամբուլի :

Իսյց երբ կուզայ կեանքիս վէրջը ,
Անհու-էլ առաջիս տեսնեմ ,
Օղին կ'ածեմ բաժակիս մէջը ,
Հոգեհանիս-էլ կ'ասեմ .
«Վ երջին անդամ , իմ պատուելի ,
Եկ տուաքացնենք Կոամբամբուլի » :

Պարդ կ այ ին վի չ ա կ ը :

Այս կեանքի ցաւերը , տառապանքը , նեղութիւնները ապացուցանումն , որ շատ փոքր բաղդաւորներ կան՝ քանթէ անսառններ . մարդը ունի ուրիշ վիճակ : Եթէ ամեն բաղդը պիտի վերջանայ մեղ հետ , եթէ մարդը ոչինչ չէ կարող սպասել այս կեանքից յետ , եթէ մյս աշխարը մեր հայրենիքն է , մեր ծագումն է ու երանութիւնն է , որ մենք կարող ենք մեղ խստանալ ինչո՞ւ պիտի տրաղդ լինինք : Եթէ մենք ծնուած ենք զգայական ուրախութիւնների համար , միթէ նոքաչեն կարող մեղ բաւականութիւն տալ ու հեռացնել մեր սըրտի վիշտն ու աղէտը : Եթէ մարդը ոչինչով վեր չէ կենդանիներէն՝ ինչո՞ւ այն պէս չի անցնում կեանքը ինչպէս նա՝ առանց հոգսի , առանց անհանդըստութեան եւ տըհաճութեան : Եթէ մարդը գիտէ , որ աշխարիս բաղդը մշտնջինսոր չէ , ինչո՞ւ չի գըտնում նորան այս երկրումը : Առանից

յառաջանում է այն, որ հարըստութիւնը անհանդըստացնում է նորան պատիւը, զուարձութիւնները ձանձրացնում են, գիտութիւնները շփոթում եւ զբուռում են նորա հետաքրքրութիւնը՝ չտալով բաւականութիւն. լաւ անունը վշտացնում է, նեղում է. այս ամենը չ'են կարողանում լըցնել նորա սրտի անսահման տարածութիւնը, եւ ինչ է մընում նորան ցանկանալ: Վիւս բոլոր էակները բաւական իրանց վեճակից՝ բաղդաւոր են այն դրութիւնով, ուր տեղաւորել է նոցա բնութեան եղինակը: Աստեղները հանգիստ լինելով հաստատութեան մէջ՝ չ'են թողնում իրանց բնակարանը, որ գնան լուսաւորեն ուրիշ աշխարհներ. երկիրը գիշեր ցերեք շարժողութեան մէջ լինելով՝ չի բարձրանում, որ գնայ աստեղներու տեղը բռնէ: Ահնդանիք բնակում են դաշտի վերայ, չ'նախանձելով մարդու վիճակին, որ բնակում է քաղաքների մէջ եւ հոյակապ պալատներումը: Ուրբէունները զուարձանում են օդի վրայ՝ չ'մոտածելով, որ կայ ստեղծուածներ աւելի բաղդաւոր քանթէ նոքա: Ամենքը բաղդաւոր են, ամենքը իրանց տեղումն են բնութեան մէջ, մարդը միայն անհանգիստ ու անբաւական է: 'Վա՛ միայն յափշտակած է իւր ցանկութիւններից, թոյլ է տալի երկիւղին սկատել իրա սիրտը, գըտնում է պատիժ իրա յոյսերի մէջ, գառնում է տըխուր եւ անբաղդ զուարձութիւնների մէջ. մարդը միայն ոչինչ չի գըտնում այնտեղ, ուր-որ նորա սիրտը կարող էր վայելել ամեն տեսակ բաղդաւորութիւնը:

(Պարզմանութիւն՝ ի գաղղիականէ):

Печатать позволяетъ съ тѣмъ, чтобы по отпечатанію представлено было въ цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. С. Петербургъ, августа 10 дня 1856 года.

Цензоръ *B. Бекетовъ.*

四庫全書

զմունք արքան ապահով է կատարել առաջ

• բնակչություն ՕՀ և Անդր

ԵՐԵՍԻ

ԹԱՌԱՀԱՄԱՐԻ պարունակութիւնը.

ԱՆՁՆԱՍ ՄԱՐԴ	1
ՊԱՅՐԱԿԱՆ ՄԷՐ	3
ՄԻՐՈՅ ԵՐԳ	5
Համակարչորդութեան ժամանակ պատահած անցք	6
Հանգ եւ ստրուկ Պակաօի պատմութիւնը	8
ՎՐԱԿՐԻ բաժանումը	10
Պատանի (Վրեւելեան վէս)	12
ՈՍՏԻԼ	14
«Օփծեռնակ, ծիծեռնակ»	15
Հարբած մարդու երգ	—
Բարոյական խրամներ եւ իմաստալից խօսքեր	16
Առաջին մարդը	17
Աբրաստ Բագրատունի (աղգային վէս)	20
ՊԱՅՐԱՔԱՋԱՔՈՒՄԸ ԿՐԹԱԾ ԵՐԻՍՊԱՍԱՐԴ	23
Վախիջեռանի երգ	24
Խակական երջանկութիւն	25
Փող	26
Վկարիչ	28
Վերջին գարուն	29
«Վռամբամբուլի»	30
Վարդկային վեճակը	31



ՀՀ Ազգային գրադարան

NL0585648

